

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼՏԱՐԻԱ

Տարեկան 12 ֆր.
Վեցամսեայ 6 »

ԱՐՏԱՍՍԱԶՄԱՆ
(2 քիւ մեկ ծրու ուր)
Տարեկան 14 ֆր.
Վեցամսեայ 7 ֆր.

ԱՄԵՐԻԿԱ
Տարեկան 2.60 տղ.
Վեցամսեայ 1.50 »

Կ Ա Ն Խ Ի Կ

Մանուցման տղը
20 սանթրիմ



ԻՐԱՎԱԿԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔԻՇԱԲԻ ԵՒ ՀԱՐԱԹ

Ա Ս Յ Է

Redaction du journal

„Iraivounk“

V A L N A (Bulgarie)

— o —

Редакция
на ВѢСТНИКЪ

„Иравункъ“

ВАРНА (България)

— o —

Գրութիւնք եւ
չին տրուիր

ՀԱԳԵՏԱՍՆԵԱԿԸ

Իկրէսի և քէնէսի դէպքերը գործադրութեան մէջ հակիրճ հետազոտութեան արժանի չեն, որոնք եւրոպական լայնածաւալ թերթերու մեծագոյն մասը հրատարակելով իսկ զանց ընդնեն. անոնց վարիչները գիտեն թէ լուր թիւնը ոսկի է, փոխաբերական իմաստէն տարբեր կերպով. Տարակուսելի է որ արտառայական սղերը զանազան ու բացարձակ եղանակները զոր մեղ Պոլսէն զը զը կէ բարձրորէն. հեղինակաւոր թղթակից մը:

Գաղով դեռ պահանջներուն, չեն կրըցած անգիտել դէպքեր որոնք ան տարակոյս, իրենց աւելի կատարեալ մանրամասնութեամբ մատնանշուցան, ոչ ալ զանոնք իրենց կառավարութիւններէն քաղարկել:

Մնաց որ եղածները մասնակի դէպքեր չեն և կարեւոր է ցոյց տալ թէ ոչ միայն Պիլիսի ու Էրզրումի վերայէն իրենց անհամաձայնութեամբ, այլ ամեն կողմ, Պալատի մօտ ու Մուշի շրջակայքը մանաւորապէս անընդհատ կան կատարածները վերսկսան:

Նոյն իսկ Մուշի մէջ, զինուած Քիւրտեր քաղաքը կոխկոյն իւր թէ հայերու կողմէ սպաննուած սղայի մը մահաւան վրէժը առնելու համար. խառնութիւնը ան միջապէս գոցուցան, ու շուկան լքուցաւ. հայերը ալ իրենց տուններէն դուրս ելին. չէին համար. ձակեր: Սակայն անոնցմէ 44 հոգի սպաննուցան, Երթիւնէի թիւնը ընդհատուցաւ քաղքին ու մօտակայ գիւղերու միջեւ, որոնց մէ մին, Մօզոմէք արիւնարբու հրոսներու յարձակումը կրեց. ուրիշ շատ մը գիւղեր, Ս. Կարապետ վանքին շ ջախջախ, թալուեցան ու քանդուցան: Ինքնին կը հասկցուի որ յարձակողները իրենց գործողութեան մէջ արգելքի չի հանդիպեցան:

Պալատի մօտ, ինչպէս մեր վերջին թիւերն մէջ հրատարակուած նամակը նախատեսել կուտար, Ճէլալի քիւրտերու շարա-

գործութիւնները կը վերսկսին զը պրհի յոճախումով մը:

Արծաթի ջաղացքը. Սուրբ Զաքարիան սպաննուցաւ ու Պաղատաւոր աղա մը ծանրապէս վերաբերուցաւ: Ռարիք Պողոսի գիւղին քով Ամիրխանի սպաննուցաւ. վայրագ նրբութիւններով Քիւրտ Զեքայի կողմէ որ Համիտի յէ հեծեալազօրքին սպառ Սալիտի հետեւորդն է: Առեւանգուցան. Չէրիան, Արմախանի աղջիկը, Պալատի քիւրտ Մէհմէտ ստիկանի կողմէ: Հայերի կինը, Մուկտար տառնապետին կողմէ: Գեւորգի նշանածը Պալատի քիւրտ Բէքէհէտի կողմէ: Արծաթի բնակիչներէն 60 հոգի, Սալիտի ու անոր Համիտիներէն տարտափուհար Պալատի քաղքին կառավարութեան պաշտպանութիւնը ի զօր թախանձելու: Կը պատրաստուին Ռուսիա դադիւն:

Այսպէս գանդաղորէն, դաշուհով, սովով, գաղթականութեամբ Հայկական երկիրը կանխադանայ ու բնաջնջման գործը կը կատարուի:

Սակայն դեռ պահանջները ու Եւրոպական պետութիւնները եղածը կը թողարկեն, ծախսայից քաղաքավարութեամբ մը կ'սպասեն, եղեւնագործը կշտմաբեւ համար որ վերստին մեծ ջարդեր հրամայէ:

Ինքն իսկ չի թերանոր առնոց ազգաբնակիչ, փառնիկ հաճոյք կ'զգայ չափազանց շնորհավար երեւելէն: Գոնէ իրենց հանդստեամբ ցաւակցութեամբ, սպաննուիքի ճանուցարներ պատրաստելու, ու իրենց ռոպը զոհերու անգարմանի կորուստը ողբալու ատեն տալ կուզէ:

Եկրէկի մէջ, ինչպէս Սասուն ու այն տան տեղեր ուր արդէն արիւնը հոսեց, կոտորուիները հանգիստաւոր կերպով կը հոգնեն թէ Ապտիւլ Համիտի անունով կը գործեն ու միշտ ալ իրաւունք պիտի ունենան, չնորհիւ արդ Աստուծոյ Շուքին պաշտպանութեան: Զիրենք քրիստոնէայ ու քաղաքակրթութիւնը ժողովուրդներու ներկայացուցիչները և պետե-

րը կը թողարկեն ու կը բաժանեն կոյսերական եղեւնագործը: Ընելիք անմիջական պայտականութիւն մը ունին, զոր գիւրտութեամբ կրնան ընել: Կապիւ ու զգեստեւ կարմիր զաւանը:

Եթէ գործելու յամենան, վախ կայ թէ մասնաւոր նախաձեռնութիւնը իրենց կամայական անկաւարողութեան չի յաջողէ: Բայց այն ատեն գոյց է Եւրոպական շա. հերը պիտի վառնգուին, Եւրոպական կեանքեր պիտի զոհուին, զարնելու համար, որ եւ է կերպով այսքան սփիւններու հեղինակը:

Ու այդ օր, անշնորհ բան մը ըրած պիտի ըլլան իմէ զանգա. տին թէ, տառապեալները, հակադարձաբար իրենց արկղին կը փնտսեն ու զիրենք քիչ մը կ'արիւնտան:

Բիւն Գիյաս

(Բնո Արսէնիա)

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՆՑՈՒԴԱՐՁՔ

Բոլոր քաղաքական հարցով հետաքրքրուողներ չուրջ երկու շաբաթէ ի վեր իրենց մասնաւոր ուշադրութեան առարկայ ըրած են Ռուսիոյ և Պալատի միջեւ տեղի ունեցած անցուղաբն: Մեծ Դուքսի պաշտօնական այցելութիւնը շատ անսակ ենթադրութեանց դուրս բացած է: Շատեր կը կարծէին թէ այս այցելութիւնը հաւանորոշ է Աւստրիացի բարձրաստիճան անձնաւորութեանց վերջերս Պոլսէն տուած այցելութեան, այսինքն Աւստրիոյ Ռուսիոյ կառավարութեան հետ բարեկամութիւնը սերտացնելուն փոխարէն, Չարն ալ Պալատի ուր մերձեցում մը ցոյց կուտայ: Միւսնայն ատեն շատ խօսուեցաւ թէ Ռուսիան Վառնան և Պալատի, — մանաւանդ այս վերջինը — ժամանակի մը համար վարձու առնել կուզէ, եւ ասոր փոխարէն ալ Չարի կառավարութիւնը պիտի աջակցի Պալատի Սուլթանի անուանական գերեզնիստութիւնը թոթափելով անկախ թագաւորութիւն հռչակուելուն, ինչպէս են զրացի պետութիւնները, — Սերպիա եւ Ռումանիա:

Ռուսիոյ այս մերձեցումը եւ այդ սովոր եղած այլընդայլ կերպով թիւնները ինչպէս Պոլսոյ նոյնպէս եւ

Վիեննայի մէջ մտքերը անանգիստ ըրին: Ալ բացարձակ անանկ կարծեցին թէ Ռուսը Պալատեան երբ Սլաւ Պետութիւնները, Պալատի, Սեւրեա եւ Սերպիա, անդառնալի կերպով իրեն կապած է. մանաւանդ այս վերջնայն նորապսակ ամուսին ի մօտոյ Բելլութրպուրկ ընելիք այցելութիւնը կուգայ այս կարծիքը աւելի զօրացընել: Պալատի մէջ միայն Ռուսանիւն կը մնայ Աւստրիոյ բարեկամ, անգիւ Յունաստանի բարեկամութիւնը շատ զօրաւոր երաշխիք մը չի տար արդէն Աւստրո-Հունգարիոյ, քանի որ դաւանանքի, — Օրթոտոքսութեան, հզօր կապով մը կապուած է Ռուսիոյ, որ ամբողջ Հելլէն տարրէն սիրուած Եօաքիմ Պատրիարքի ընտրութեան առթիւ իր ազդեցութիւնը ի գործ դնելով, Յոյներու համակրանքը անգամ մըն ալ գրաւեց վերջերս: Այսպէս Աւստրիան Պալատի մէջ երբ միայն Ռուսիայի բարեկամութեամբ կ'միջի թարուէր, յանկարծ նոր երեւոյթ մը եկաւ այդ միջնորդութիւնն ալ խիւլայն է Մեծ դուքս Ալեքսանտր Միխայիլովիչին Բէռլինէն այցելելը. այս առթիւ Բելլութրպուրկի եւ Պալատի մէջ ինչ անցուղաբն եղաւ, զեռ յայտնի չէ. միայն կը կարծուի թէ Սթուրգայի դահլիճը ուստ ազդեցութեան Պալատի մէջ տիրապետելու անհեղձ, առ անհ հարկադրուեցաւ Չարի կառավարութեան առջեւ քննելու: Արդէն ինչպէս յայտնի է Ռուսիայից Մալկեդոնիայէ աւելի Հունգարիոյ մէջ մասին համար ալ ձգտումներ ունին, որ միջինէ աւելի ուսմէն բնակչութիւն մը կայ ճիշդ Ռուսիայի սահմանակից դաւաններուն մէջ: Ռուսիայի մէջները երբ ի Մալկեդոնիա իրենց ձգտումները յաջողցնելու անկարելիութիւն անուան, կրնան իրենց քաղաքական հայեացքները Աւստրիոյ վէմ գործուցած ըլլալ: Այժմ ինչ կը խորհի Աւստրիա եւ ինչ կ'ըլլայ այս անցուղաբն հետեւութիւնը, մասնաւորապէս պիտի որոշէ:

Երբ Ռուս քաղաքականութիւնը այս պէս կ'արշաւէ Պալատիներու մէջ, Անգլիացին ալ, ձեռքերը ծալած չի նըստիր. հակառակ Հարաւային Աֆրիկէի մէջ իր ծանրապէս գրադած ըլլալուն, Արեւելքի գործերն ալ իր ուշադրութեան չի վրիպեցնէր. Միջերկրականի նաւատորմի զը կը զօրացնէ եւ Պալատեան ցոյցերուն զէմ հակացոյց մըն ալ ինք ընելու համար ահագին նաւատորմի մը որ մօտ ու պզտիկ 76 պատերազմական նաւեր կը բաղկանայ. 11,000 ծովային զինուորներով, Իսպանիոյ ջրերը զրկած

է, ուր, Ռաբբոյի առջեւ, իտալական տորմիզէն խիստ բարեկամական ընդունելութիւն մը կը վայելէ:

Ինչպէս գիտե՞ք Իտալիայի Ալպանիայ համար իր որոշ ձգտումները ունի, կուգէ Արեւմտեան Եւրոպայի իրեն հետ ամուր կապերով կապել այդ լատին ցեղը. այս նպատակաւ Հռոմի խորհրդարանին մէջ եղած հարցադրանքի միջոցով ու վիճարանութիւնները դեռ 2-3 շաբթուան դէպքեր են:

Իսկ քաղաքային հարկ չէ թէ Անգլիան Արեւելքի մէջ ինչ շահեր եւ ինչ ձգտումներ ունի հակառակ Ռուսիոյ: Հետեւաբար այս ամենը Արեւելեան խնդրոյ շուրջ կը դառնան. եւ հակընդդէմ շահեր ունեցող մեծ պետութիւններ այսօր իրարու հակառակ կողմնակի ակոյակ կը ցցեն. եւ ինչպէս կերեւայ այս սպառնալիքներուն ի տես ամենէն աւելի թիւերն է որ սրտադողի մէջ կը գտնուի:

Միջազգային քաղաքականութեան նման իր կողմը հակեցնող մեծագոյն ծանրութիւնը, Գերմանիա, Արեւելեան խնդրը պարփակող այս չիտթ կացութիւնը բնականապէս անտարբեր աչք չի դնողը — թէեւ այս միջոցին ինքն ալ նախկին տաշտակի մէջ է Լայպցիկի եւ ուրիշ շատ մը գերմանական դժամատուներու եւ ընկերութիւններու անանկութեանց պատճառաւ — քանի որ Արեւելքի մէջ մեծամեծ շահեր ունի եւ պատերազմի մը հետեւեալք իր այդ շահերուն անհրապէս կրնայ վնասել, ու մանաւանդ հաւանական է որ այդ պատերազմին բաղդը պետութեանց մէջ Գերմանիոյ 30 տարիէ ի վեր ստացած առաջնորդութիւնն ալ կորսնցնել տայ:

Ահա այս վերջին հաւանականութիւնը բնականապէս վերջէլ կայսեր համար շատ մեծ կշիռ ունի. ուստի նա ամեն գնով պարտաւոր է աշխատել մեծ պետութեանց միջեւ ու եւ պատերազմի մը առաջը առնելու, զի կրնայ մասնաւոր պատերազմը ընդ հանուրի վերածուի:

Աւստրոյի ֆրանց Եոզեֆ այնպիսի կայսրն ալ ամեն ինչէ աւելի այս բանէն կը սոսկայ. քանի որ իր երկրորդ այլազան ժողովուրդներու քաղաքական կոնֆլիկտներն վտարան են ու իր կայսերական գահուն սուրբը տնկալուն պատանդաւորներու վրայ զեռելը անհրաժեշտ է: Ահա այս երկու զինակից կայսրերը ամեն գնով մեծ պատերազմի մը հաւանականութեան խուսափել կուզեն:

Եւ այս պատճառաւ ճշմարտութեան հետ չենք գտնուիր մեր նախորդ թուով հրատարակած այն հեռագրական լուրը թէ Վիեննայի գերանագլխական չըջանականութեան մէջ գրոյց կը չըրջի թէ յառաջիկայ օգոստոսին Անգլիոյ, Գերմանիոյ եւ Ռուսիոյ վեհապետները Սալաի մէջ զիբար պիտի զինաւորեն, եւ ուր Վիեննայի կայսրը միջնորդ պիտի ըլլայ Չարին եւ Էտուարտ Թաղաւորին միջեւ: Ինչ բանի միջնորդ: Այս շատ պարզ է թէ քաղաքական կարեւոր խնդրոց առթիւ երկու պետութեանց միջեւ դաշնուող շահերու անհամաձայնութիւնը քստ կարելոյն հաշտեցնել իրարու եւ անմիջական կարգադրութեան կարօտ եղող խնդիրներուն, ինչպէս են Արեւելեան խնդիրները, լուծում մը տալ: Այս Աւստրոյի եւ մասնաւորապէս Գերմանիոյ փափաքն է. բայց չենք գիտեր թէ երկու մրցակիցները այդ կերպով պիտի համաձայնին:

Գործակար

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

(Մեր մասնաւոր քղաքական)

Սոփիա 5 Յունիս
Կառավարական գործեր իրենց սպորտական ընթացքին մէջ մտան նորէն. Ռուս իշխանին գալը ու երթալը տալարէն գրադեցոյց մը քերը եւ պիտի զբաղեցնէ տակաւին, զի նոր պիտի տնտեսեմք մեր եղբայրականութեան եւ զինուորական միութեան հետեւանքները. սակայն որովհետեւ տապալան միշտ կ'սխալուի է պարագաներէ, ասոր համար ալ չալժեր ենթադրութիւններ ընել:

Մեր այս ջերմ յարաբերութեան ինչ թէ ինչեր կրնան ծնիլ, քիչ թէ շատ ակնարկած եմ արդէն թղթակցութեան մէջ ալ:

Ռուս կայսերական գրամատան 8 միլիոն ֆրի փոխառութիւնը թէեւ պզտիկ բան, ազատեց մեզի մեծ հոգէ մը, չպիտի ըսեմ անանկութեան: Ռուսին այս յառաջացումէն Եւրոպայ իրար անցած տնտեսական չի կրնար եւ չպիտի կրնայ բոլորովին մերժել ալ մեր փոխառութեան գործը. եթէ Եւրոպայի մեզ ստակ չտայ, Ռուսիա ալ չպիտի կրնայ տալ արդարեւ այնչափ ստակ, սակայն ճարձգ պիտի գտնէ ու զմեզ բոլորովին իր ձեռքն անցնէ. եթէ Եւրոպայն օգնէ մեզ, ինչ որ յուսարի է, զի Եւրոպայ չուզիր որ Ռուսը յառաջանայ այնքան ի Պարսն եւ զօրանայ, յայտնի է որ մենք բոլորովին Ռուսին գիրկը չպիտի նետուինք. ըսել է երկու պարագային ալ մենք պիտի կրնանք օգտուիլ:

Միայն իցի՛ թէ ջրին մէջ երկուցորդ բռնելու համար, մեր բերան եղածը չի կրօնցնէինք:

Իշխանին այցը բնականաբար զօրացուցած կերելի մեր նախաբարութեան կամ կառավարութեան գիրքը. ամեն ժամանակէ աւելի ազատ կը խօսին ու կը գրեն կառավարականք, ճայլ լատիս, եւ թէ զօրութիւնն ու ուժը միայն զբաւն են, նշանակութիւն չունի. միութիւնը ուժ է արգարեւ, սակայն ներքին թէ արտաքին միութիւնը. կաթնիլ արտաքին ուժին եւ ջրածել ներքինը, ինչպէս անհատի մը նոյնպէս եւ ուղի մը ու ժողովուրդի մը տկարացման եւ տկարութեան նշանն է:

Օտարը միշտ օտար է. նա չըզգար մեր ցաւը ինչպէս մենք կըզգանք. նա պիտի ընէ, պիտի օգնէ մեզ ըստ իր շահուն:

Ռուսը մեզ ցեղակից է, կրօնակից եւ սերտ նապաստակ ենք բոլոր նախնական. բայց ո՞վ կրնայ անկեղծօրէն չըսել, որ կատուն մուկը կը բռնէ իր փորին համար:

Այս, ո՞ր է այն անկեղծ եղբայրականութիւնը. միեւնոյն ազգի, միեւնոյն ընտանիքի զաւա-

կաց մէջ չեղածը ինչպէս կարելի է փնտել օտարին հետ ու մէջ:

Սարաֆովի հացին իւր քսեց հետեւաբար իշխանին այցը. ի սկզբան տարակուսելի էր փոխառութեան յաջողութիւնը. այժմ հաստատաբար կըստաւոր որ պիտի յաջողինք. թէ ինչ պայմաններով. խիստ գաղտնի կը պահուի. այսուհանդերձ ծխախոտի մոծօփոք ալ պզտիկ տալարեան անգամ գիտեն:

Սակայն յայտնի է, որ միայն ասով չը լինար գործը: Տակաւին ի՞նչ երաշխաւորութիւն կուգէ մենէ Եւրոպայ, զից եւ գիցուհին. բու տրուած է գիտնալ այդ գաղտնիքը:

Բայց Պարսի Սարաֆովին գործը ալ յայտնուեցաւ. հարցաքննելի գաղտնիք իր տեղեկագիրքը ներկայացուցած է ընդհանուր գաղտնագիրն:

Մակեդոնական կոմիտէի այդ գործունեայ եւ ժիր մշակին եւ իր ընկերաց կը վերագրուին մարդասպանութեան հրամաններ ուղարկել թէ անուղղակի, ինչպէս աւանդու առաջ կրած եմ: Այդ մարդասպանութիւնը որ գործուած են ոչ ի շահ անձի մը կամ բնկերութեան մը ալ զերի եւ ստրուկ ժողովուրդի մը ապստամբութեան համար, միայն թէ սպաննալք օտարահատակ են, թէեւ միեւնոյն ազգին անհատներ. տնտեսեմք պիտի ներուի՞ն մեր երգեհոններէն թէ պիտի պատժուին:

Եթէ Յուլիան վերջերք չը ժողովին մեր սոյն գաղտնաքը, պիտի սպասենք մինչ Սեպտեմբեր եւ մինչեւ այն առիտն ալ գոցէ ի բանտ մեան, եթէ գրամական եւ բաշխաւորութիւն չընդունուի ինչպէս չընդունուի: Մի՞թէ անոնց արձակուժը տակն ու վրայ պիտի ընէ աշխարհ: Ռուս մանիոյ հետ կամաց կամաց կը հաշտուինք ալ, Ռուսը պիտի ներդրի թէ անտարակոյս եւ Պարսը ինչ ու այս խայտառակ խաղն ալ պիտի գտնէ իւր վերջը:

Թէ ազգեցութիւն մը պիտի ընէ՞ արտաքին այս քաղաքականութիւն ամբաստանեալ ապստամբական նախարարաց խնդրոյն վրայ ալ:

Մասնաժողովը կը չափունակէ իւր նիստեր եւ իւր ամբաստանագիրը պատրաստուելու հիւսիս ու նիւթեր կը հաւաքէ. մինչեւ օգոստոս 14 պատրաստ պիտի լինի սոյն ամբաստանագիրը եւ երեսփոխանաց արուած, ոչ առանձին կարգան գրութիւններ եթէ ձեռք բերին անգամ առնեն — եւ ամբաստանակէտ մը գտնեն. Օգոստոս 16 ին պիտի վերաբացուի

Սպարանդէն եւ պիտի տեսնենք թէ ի՞նչ ընթացք պիտի բռնէ կառավարութիւն. սակայն այս մասին հարկ չիայ այսչափ երկար սպասելու թէ ինչ պայման պիտի ունենայ խնդրը. Գարափէլօվ կուգէ Վիեննայի անոնց գլուխը, որ զինք բանտարկեցին եւ ի՞նչու վրէժ չը լուծել. ժողովուրդը պիտի տուժէ եղբւր. . . եւ երկրին մէջ կուսակցութիւնը պիտի շատնան, որի հոգ:

Կեցցէ անձն իմ, ու տակուին կը պոռայնք ու կը գոռայնք, ժողովուրդ ժողովուրդ ու նորէն ժողովուրդ:

Տարբեր վիճակ չունինք եւ մենք մեր ազգային գործոց մէջ. 7-8 ամսէ ի վեր բան մը չը մնաց, որ չըսուէր եւ չը գրուէր յանուն ժողովուրդին — թէեւ մեր մէջ եւր ժողովուրդին համապօրէն եւ համարժէշ — ընդդէմ իրաց վիճակին. բնութիւն կը պահանջուէր, այս կամ այն կը խնդրուէր եւ այսօր որ տաք օրէ տակի ժամանակէ ի վեր Գեր. Այցելուն տեղս կը գտնուի, ոչ ոք չըրենար, ոչ ոք չը բողբէր: —

Ընտրութեան կը սպասուի, այդ օր ալ պիտի տեսնենք անչափ ի մօտոյ, սակայն ո՞չ ապաքէն նոյն մարդիկն եւ ք ու պիտի գործը:

Ինչ տարբերութիւն մը չեմ տեսնիր այժմէն, զի մենք խօսող ժողովուրդ ենք միայն եւ ոչ գործող ընդհանրապէս:

Խօսիլ ալ գիտնայինք գոնէ ինչպէս վախճուիլ է եւ ներկի, այս ալ չունինք. բան մէ կերթայ:

Թ. Բազարձըք 2 Յունիս

Լսած էք անչափ թէ Թաթար Բազարձըքի մէջ համերաշխութիւն չը կրնար ըլլալ. թէ Բազարձըքիները ամենը մէյնէկ ճամբայ բռնած են եւ թէ իրենք թէ ասոնց ամենն ալ միաբանած են պարօն ու եկեղեցին յաւիտեանական ողորմելիութեան մը մէջ ձգելու համար: Այդ, կատարեալ գահաւորութեամբ կը յայտարարուի թէ յառաջիկայութեան արժէքը, այսուկ աւելի քան ալ ուրեք, գնահատուեցաւ համերաշխութեան պէտքը զգալի դրձաւ, ազգային արժանապատուութիւնը ամեն ճգնաժամ հաշիւներէ վեր պահելու համար:

Ըսել չենք ուղի թէ ճշմարտութեան, յառաջիկայութեան հաշտակորդներ երեւան չկան, Պօքոններ հոս ալ փորձեցին իրենց գոհելի ուժերով արդարութեան, խղճի ձայնին եւ մտապ սերունդներու ապագային կից տալ: Բայց նպատակն ունի տակն յետադիմութեան պատուիրակները խայտառակարար պատժուեցան:

Ազգային հաստատութիւնները յաւիտեալ վիճակ մը կ'առնան եթէ ժողովուրդը համերաշխաբար միաբանուի, հոգեւին փարի տնոնց: Ազգային համերաշխութեան ապացոյցը տեսնուեցաւ անկեղծ վարժարանի հազարաճակատ բնարութեան մէջ, նշանակելի պիտի մնայ այն խիստ

ապագայի պայքարը զոր տեղացի ազնիւ երիտասարդութիւնը մղեց, զպրոցը սպանդանոց ընող աղայապա- տիւններուն դէմ, նոյնիսկ անոնց լրջօրէկ լորձուները, հրէշ սպառ- նալիքները արհամարհելով:

Թո՛ղ իմանան տղիտութեան նուի- րակները թէ մարդուն գործն է որ պիտի քննադատէ զին: Աչքերնու- առջեւն է Ազգային վարժարանը ուր մի գաւազնիւր տարի մը կորսնցո- ցին: Ինչ սովորեցան եւ ուղէն ինչ կրնային սովորիլ այնպիսի անձէ մը որ ուսուցչութենէ ուրիշ թերեւս չատ մը բաներ կարենայ ընել: Աչքերնուս առջեւն է Ազգին եկեղեցին, ուր փառք Աստուծոյ ոչ ոք ոտք կը դնէ եւ հիմա պանդոկ դարձած է:

Կողմէք լսել ձեռն ուսող կնկան մը լացը, կողմէք լսել մանիւնք, սիկար- եան կազմիներ, վաւառտ շարքիներ, գացէք ականջ դրէք իրիկունները Թա- թար—Բազարնըզի Հայոց եկեղեցիին երկու սեռէ երգիչներուն, որոնք ազ- ցին դրամը կ'առնեն եւ եկեղեցոյ մէջ անոր ծառայելու կը զովամակնու:

Եւ այս ամենը կըլլան թոյլատրու- թեամբ կազմալուծուած թաղական, խորհուրդի մը երկու մնացական ան դամեկուն, որոնք երգում

ըրած են մինչեւ վերջը պահել թաղա- կանի պաշտօնը, չի բարեկարգել ազ- գային հաստատութիւնները, պարտ- քի տակ թողուլ թաղային անտակը եւ ի վերայ այս ամենայնի վարտիլ եկեղեցոյ ու զպրոցին մէջ այնպէս, ինչպէս պիտի վարուէին եթէ ատոնք իրենց խառնութեան ըլլային:

Փափաքելի է որ այս երկու անձե- րը ալէկ մը հասկնան թէ իրենց տա- րուան մը գործունէութիւնը բոլորո- վին ապագային եւ կատարելագոյն ա- նդուստ եղած է: Փափաքելի է որ անոնք հասկնան թէ ազգը իրենց պաշտօնավարութիւնէն զո՛հ չէ, ուստի եւ պէտք է որ հրաժարին:

Ժողովուրդին մէջ մուտ գտած այս սիրուն համեմատութիւնը կատարեալ ընելու համար կը խնդրենք Պուրկարիոյ Այլեւելու Հովիւ հայրաւորքէն պարտ ու պաշտած անօրէնութիւնները ընել, բոլորովին լուծելով արդէն կազմա- լուծեալ այս խորհուրդը եւ նոր ընտ- րութեան ձեւաւորելու համար հրա- հանքներ տալ:

ԻՐԱՆԻՆԻՔ

ՊԱՏԱՍԽԱՆՍ

Պ. Տ. Էլմասեանի

Բոլոր սրճարանական փոփոքները, բոլոր թղթակցական միօրինակ գան- զատները այս անգամ աւելի որոշ ե- րանգով կը ներկայանան հրապարա- կի վրայ: Պ. Էլմասեանի գրչին տակ «Ինչո՞ւ Դէս ու Դէնն ալ վարակուած է հրապարակի այն հիւանդութենէն, որ մեր գրողները ընդհանրապէս ան հատի վրայ յարձակելու տենդոտ մար մաշովը կը տառապեցնէ ու ժգնօ- րէն, ու անոնք՝ գրողները, այդ մարմալին պնդանքը կընեն բացա- տրութեան այնպիսի ձեւեր, որոց գոր ծածուկութիւնը տե՛ն պարագայի մէջ ներկի չպիտի ըլլար ուր է պարկեշտ գրողի»:

Ահա բոլոր տրամաբանութիւնը յետ գրութեան, զոր Պ. Էլմասեան ստու- րագրած է Իրաւունքի վերջին թիւե- րէ մէկուն մէջ՝ գաղափարներու ըն դարձակ շարքի մը տակ:

Ինչէ՛ք թէ Պ. Էլմասեան ուշադրու- թեամբ կարգացած ըլլար Իրաւունքի 36 թիւին մէջ մեր սա տողերը:

«Եւ յետոյ, երբ մենք — սպառա- կան օրէնքներու պահանջին համե- մատ — միմիայն ակնարկներու սեղմ շարքով մը կը ցուցադրենք ձաղկոմի ստակայ եղող անձր, ինչպէս ըսինք, գիտենք թէ անիկա միտակ չէ եւ իր ետին ունի կարգ մը մարդիկ որ մշեւ նոյն ազատ ճամբան կը քայլեն իրար գերազանցելու անպատկառ մրցումով մը, հետեւաբար մենք՝ այդ տիպար անձով կուզենք մատնանշել անոր դա սակարգը եւ ամենէն աւելի անոր պատճառած վնասները իր տոհմակից- ներուն»:

Այն ատեն հարկ չպիտի մնար ոչ Պ. Էլմասեանի դիտողութեանը եւ ոչ ալ իմ այս որ րացատրութեանը:

Երկրին օրէնքը բացարձակապէս կարգիլէ հրապարակի վրայ՝ նոյն իսկ վկայեալ գողին՝ գող եւ վկայեալ սը- րիկային ալ՝ սրիկայ ըսել, բայց մի- եւնոյն ատեն հրապարակագիրը պար- տական է — հաճկէ անոնց օրէնքին դէմ, բնագլխով ըլլալու պարագայ ան- նագոհութեան մը — գողը՝ իր գող եւ սրիկան ալ՝ իր սրիկան մատնանշել թէ ժողովուրդին որ գգու շանայ անկէ եւ թէ մանաւանդ անոնց, որոնք ի- րենց արամագրութեան ներքեւ կը գործածեն այդ աղտոտները հանրային գործերու մէջ:

Կը հարցնենք, հապա ինչպէս ճանչ- ցունէք, եթէ մէկին քիթին, իսկ միւսին փորին խնայելու գաղափար- տելի թուութիւնն ունենար անոնց անունի կշռալ անպարկու զատա- պարտուող հրապարակագիրը:

Ձէ, Պ. Էլմասեան, ազգային աղէտն այնքան մեծ է, մեր հեւանդութիւնն այնքան ստեղծի, որ վերաբուժական ամեն գործողութիւն ներքի կընեն, փրկութեան համար եւ հող քիթն ու փորը նկատողութեան չ'առնելէ պար- կելտութիւնը, քանի որ անոնց պահ- ուած միտքը մեր աղէտը մշտնջենաւո- րելու պատճառ կը գաղտնայ գործա- պէս:

Եւ անա այս տեսութեամբ է, որ հակառակ մէկ քանի բնականորեն թուի քրթմնջութեանը, եւ չափէն աւելի քրթմնջութեան հրապարակի տի- րոջ լեզուին, որ բարեկարգութեան մեր հիւանդութեան մեծութեանը հաւատար կ'ազդուող համեմատութիւններ կառ- նէ հետզհետէ խստութեան կողմանէ:

Ուրեմն ա շա պօն հոս:

Դէ՛ս ու Դէն

ՆԵՐՔՈՒՄՆԵՐ

1892էն մինչեւ 1897 թուականը, Պուրկարի Հնչակեան մասնաճիւղի վար չութեան անդամներէ մին եղած եւ եւ վարած եւ՝ Տոմարակալ-Կնքապահի պաշտօնը, հետեւաբար կը փութամ հր րապարակաւ, յայտարարել թէ Տիար Միսակ Թորիկեան ընդա մասնակցու- թիւն եւ ուր է յարաբերութիւն ու- նեցած չէ Պուրկարի Հնչակեան մաս- նաճիւղի հետ, բոլորովին սուտ է Հըն չակի մայիս 4 թուոյն մէջ երեւցած «Կոստանալը» ստորագրութեամբ գը- րուած զրպալտալից յօդուածի պարտ- նակութիւնը:

Ցաւայի է յոյժ, որ «Հնչակ» եւ իր Պուրկարի Մասնաճիւղի փոխանակ իր ուշը ազգային նուիրական գաղտնի վը- րայ սեւեռելու, սկսած է անհաստա- կան անամէջ խնդիրներով զբաղուիլ եւ այդու անպատուել նաեւ Յեղափո- խութեան սուրբ անունը:

Յ. Գ. — Մէկ մէկ օրինակ գրկած եմ հրատարակութեան համար «Շար- ժում», «Չայն Հայրենեաց» եւ «Ար- շալոյ» լրագիրներուն:

ՆՈՅՆ (՝)



«Իրաւունք»-ի 27 յունիս թուոյն մէջ Պուրկարի «Հովիւ»-ը, ազգային գործերու եւ քաղաքս հիւր գտնուող Գեորգ Գ. Վ. Նալպանտեանի մասին յօդուած մը գրած ըլլալով, կը փութանք ցաւ ի սիրտ յայտնել թէ բոլորովին սուտ եւ «Հովիւ»-ի խելա- պատակին մէջ ծնունդ առած բարբառ ջանքերը եւ միայն այդ յօդուածի պա- րունակութիւնը:

Գեորգ Գ. Վ. Նալպանտեան բնաւ հոս մնալու փափաք յայտնած չէ եւ ոչ ալ այդ մասին ուր է ձգտում մը ունեցած է իր եկած օրէն ի վեր, ընդ Նալպանտեան ժողովուրդեան մեծամասնու- թեան յօժաքին եւ խորհրդոյ հա- լաւութեան համաձայն է որ կը մնայ հոս, կը հովուէ եկեղեցին եւ ժողո- վուրդը եւ պատճառ կըլլայ ժողովուրդ- եան խոռոչներում եկեղեցի յաճախե- լուն, ի կատարումն իրենց կրօնական պարտականութեանց:

Հայր սուրբի քարոզչները եղած են միշտ խաղաղութիւն, սէր եւ միու- թիւն, դպրոց եւ եկեղեցի եւ ոչ ու- րիշ բան: Տաճկաբէն եւ հայերէն լեզ- ուաւ կոչում ըրած է պանդուխտ ու տեղացի ազգայիններու օգնել զպրո- ցին եւ վարժարանի սեփական չէնքը գնելու հանգանակութեան մասնակ- ցիլ, որով կարելի եղած է 1000 ֆր. ի գումար մը հանգանակել մինչ ցարդ ի հայր վարժարանի յարմար չէնքի մը կառուցման:

Ուրախ ենք ըսելու որ քաղաքիս բոլոր ազգայինք միաբանած են Ազգ. ու Վարժ. գործերը կանոնաւորապէս յաւաքողներու համար, եւ մինչեւ հի- մա մէկը զգոհութիւն յայտնած չէ հայր սուրբի միտքն է քննադատելի արարքին համար, ընդհանրապէս յա- ջողած է նա կարճ միջոցի մը մէջ ա- մենուն սէրն ու համակրանքը առ ին- քն գրաւել:

«Հովիւ»-ի ստալոց գրութիւնը ու- ընչ բան չենք նկատել. բայց եթէ քար գայթակղութեան մը ընդդէմ ազգային գործերու եւ հանգանակու- թեան, որոյ յաջող արդիւնքը կերեւ- լայ իր սեւ խորհուրդներուն ու մե- քենայութեանց արգելք է հանդիսա- ցել: (**)

Ի դիմաց Թաղական Խորհրդոյ Աստեղագիր Աստեղագետ Գ. Օ. ՉԱՄԵԼԻՆ Մ. ՄՐՄՐԵԱՆ Կնիք Թաղ. Խորհրդոյ Պուրկար, 2 յուլիս

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Վիեննայէ կը տեղեկացնեն թէ Շուվուրի Տէր Թովհան քահանայ թ'անդակունին՝ որ տարիին քանի մը ամիսը այդ մայրաքաղաքին մէջ կանցնէ, տեղւոյն սակաւաթիւ հայ գաղթականութեան հոգեւոր

(*) Ստորագրութեան ճշդութիւնը վաւերացուած է տեղւոյն Թաղ. Խոր- հուրդէն:

Մ. Խ.

(**) Այս պաշտօնական նամակը ըս- տորադող անձերը մնգ անձանքի են. իրենք կրնան մէկ ակնարկով վար- գապիտէն հրապուրուել ու գանի Պուր կազ վար դրած ըլլալ. բայց մենք գի- տենք թէ Գեորգ վարդապետ այդ- չափ չուս րալիփոխուողներէն չէ, մանաւանդ մեր առած տեղեկութեան նայելով, ազգ. հոգեւոր իշխանութիւնը որոշած է որ նա Ս. Էլմասեանի եր- թայ կամ ուրիշ վանք մը քաշուի:

Մ. ԽՄԲ.

պէտքերը մատակարարելու պաշ- տօնով, նոր ջանքեր ընել սկսած է վիեննայի մէջ Հայոց մատուռ մը բանալու: Կ'իմացնեն թէ Տ. Թովհան քահանայի այդ ջանքերը կը քաջալիրէ Ազգ. Գիտ. Եւ Երեւ- պաշտօն անուն յարեսէր ազգայի- նը:

— Տեղւոյն աղջկանց կրթարա- նի ամսվերջի հրապարակային հարցաքննութիւնք պիտի սկսին վաղը (կիրակի 8 Յուլիս) եւ պիտի աւեն մինչեւ շաբաթ օր: Վար- ժարանի Տնօրէնութիւնը, ըստ պատշաճի, քննութեանց տպեալ կարգացոյցը թէ չ'ամբարշտութեանց եւ թէ ծնողաց զրկած ըլլալով, կը խնդրէ ներկայ լինիլ քննութեանց որոշեալ ժամերուն ի քաջալիրու- թիւն աշակերտաց եւ ուսուցչաց:

— Քաղաքիս եկեղեցոյն դպրաց դասու Գ. տարեշրջանի յրանալուն առթիւ վաղը, կիրակի, դպիրնե- րը խմբովին հրաւիրուած են եկե- ղեցական արարողութիւնը հան- դիսաւ որ շքով կատարելու համար ներկայ գտնուիլ եկեղեցին, ուր հոգեհանգիստ ալ պիտի կատարուի ի յիշատակ դպրաց դասու նշնեցե- լոց:

— (Վերիկայի Հայոց Բ. Համա- ժողովի անգամներու ընտրութիւն- ները արդէն սկսած ըլլալով, Ֆիշ- պուրկէն Տ. Արսէն վ. վիեննայի, Ֆրէզնոյէ Տիար Յ. Թաւաշանեան պատուիրակ ընտրուած են: Հա- մաժողովը Սեպտեմբերին պիտի գումարուի եղբւր Ուստրի մէջ:

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

Մանիլայէ Ամերիկացի վաճառական մը Լոնտոն գալով պատմած է թէ Ֆիլիպինոս ապստամբութեան հռչակաւոր Ակինալաուոյ գերի բռնուիլը կաշառքի պատճառաւ է: Իբրեւ թէ Ամերիկա- ցիք տեսնելով թէ Ակինալաուոն ձեռք անցնել անկարելի կ'ըլլայ, մարդ զրկած են սակարկելու համար թէ ո՛րչափ դրամ ստանալով կը յանձնուի: Ակինալաու 25,000,000 տուրք ուզեր է. պատերազմին համար շաբաթական այդչափ գումար կը ծախուի եղբւր արդէն, ուստի Ամերիկացի հաճած են այդ գումարը վճարել: Ակինալաու արդէն կարեւոր գումար մը առած է եղբւր Ապահիոյ դէմ ապստամբելու հա- մար ալ:

Ակինալաու վաղաքեկելու ստոր զրպարտութիւն մը ըլլալ կը կար- ծենք այս տարածայնութիւնը:

Հարաւ Աֆրիկեան պատերազ- մին մէջ մեռնող անգլիացի զինուոր- ներու ընտանեաց ի նպաստ չբեղ ե- րեկոյթ մը եւ ճաշ մը տրուած է ան- ցեալ շաբաթ: Սթըլէնտի գրաւմէն անգլիական ոսկի էր: Այս երե- կոյթին շատ մը իրեղէններ գողցուած են: ապարանքէն, նոյն իսկ սեղանի զգալներ եւ պատմական արժէքաւոր իրեղէններ վերցուած են:

Ճիշդ ունի բանը կը պատահի ստիպ իրքական հարսանիքներու մէջ:

Անցեալ շաբաթ տաքը Ամերի- կայի մէջ հաղաւարտ կեանքի գրա- լեց: Հարիւրի չափ դիակներ թաղուի- րն մեծ փոսի մը մէջ. անոնց ո՛վ ըլ- լալը անոնց ճանչնալու: Ծոտեր իրենց սիրելիները կը փնտռեն ու չեն կրնար գիտնալ թէ ո՛ւր մնած ու թաղուած են: Տաքէն իշող մարդու մը համար բժիշկ մը կը կանչուի: Թէ բժիշկը եւ թէ մարդը նոյն տեղը կը մեռնին: Յուլիս 3 ին մեռնողներու թիւը

Отговорникъ Н. Драгулевъ
П "Взаимнотъ", Варна.